պլաստիկ վարժանքներով: Երեխաները սովորել են պարային նոր շարժումներ: 3 երեխաների խումբ հաճախելը սկսել են հունիս ամսվանից:
Խմբի մասնակիցները սովորել են տարբեր ժանրերի պարային շարքումներ և բեմադրություններ: Լատինամերիկյան պարերից սովորել են ջայֆ, սաբա/վիսկ, հիմնական քայլեր: Տարբեր ազգային ժողովրդական պարերից սովորել են վրացական պարեր, ռուսական պարեր: Սովորել են հայկական նազանք պարը, դասական պարերից սովորել են շղթայաձև պտույտներ:
Հաշվետու ժամանակահատվածում պարի խմբակի երեխաները գեղարվեստական կատարումներով հանդես են եկել կենտրոնի 14-րդ տարեդարձի միջոցառմանը և Բաց դռների արշավին:

**Խոհարության խումբ:** Խումբը մեկրակվել է հունիս ամսին: Խումբ հաճախել են **9** երեխա, որից **4** աղջիկ **5** տղա: Երեխաները տեղեկացվել են հին հայկական ճաշատեսակների, ուտեստների և նրանց առանձնահատկությունների մասին: Երեխաները պատրաստել են բանջարեղեբային աղցաններ աղցաններ, մրգային պաղպաղակ, կոմպոտներ և թթուների տեսականի:

**Անգլերենի խումբ:** Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնում իրականացվել է Անգելրենի խմբակը՝ <<Կայուն հիմնաքարեր>> սոցիալ-կրթական ՀԿ-ի հետ համագործակցության շրջանակներում: Անգլերենի դասընթացները իրականացվում են Օքսֆորդի համալսարանի ուսանողի կողմից՝ կամավոր կերպով և առցանց տարբերակով: Խմբակը իրականացվել է շաբաթական 1 անգամ, 45 րոպե տևողությամբ:
1-ին խմբին մասնակցել է **7** երեխա, որից 1 տղա, 6 աղջիկ: Այս խմբի հետ աշխատանքը իրականացվել է հուլիս ամսին:Եչեխաները սովորել են առօրյա եղանակի և սննդի տեսակների վերաբերյալ բառեր:
Հաշվետու ժամանակահատվածում կազմվել է ևս մեկ խումբ, որին ներառված են եղել **7** երեխա՝ 3 աղջիկ, 4 տղա: Այս խումբը մեկնարկվել է սեպտեմբեր ամսին: Երեխանեը սովորել են կենդանիների անունները:

**Ամենօրյա տաք սնունդ կենտրոնում:** Հաշվետու ժամանակահատվածում օրեկան կենտրոն է հաճախել **25-35** երեխա և մասնակցել է կենտրոնի կողմից իրականացվող ծառայություններին: Կենտրոն հաճախող յուրաքանչյուր երեխա օգտվել է ամենօրյա տաք սննդից:
Կենտրոնում ճաշը պատրաստվել է կենտրոնի խոհարարի կողմից՝ ըստ նախորոք մշակված ճաշացանկի:

**Յուրաքանչյուր ամիս ծառայություններ ստացած կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներ և նրանց ընտանիքներ՝ նվազագույնը տվյալ լոտում նշված շահառուների թվով:**

Հաշվետու ժամանակահատվածում Հայկական Կարիտասի Գավառ <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում աշխատանք է իրականացվել 101 երեխայի հետ (որից՝ 43 աղջիկ, 48 տղա): Յուրաքանչյուր հաշվետու ամսվա ընթացքում շահառուների թիվը հետևյալն է.

- Հուլիս -**80 երեխա**
- Օգոստոս-**84 երեխա**
- Սեպտեմբեր-**95 երեխա**